ԱՂԱՂԱԿՈՂ ԱՆԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Արցախյան պրոբլեմին քիչ թե շատ տեղյակ յուրաքանչյուր քաղաքական մարդու, ամեն մի հայի նյարդերը սղոցվում են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» որոշումն ընթերցելիս:

Մի՞թե փակ վարագույրների հետևից ժողովրդին հրամցված որոշման հեղինակներին իրոք թվում է, թե այն ընդունելիս ղեկավարվել են ինքնավար մարզում դրության «հետագա կայունացման ու բռնությունները բացառելու» բարի ցանկություններով:

Ո՛չ: Որոշումն իր ոգով ու ծնունդով կոնյունկտուրային է, հեռու՝ հարցի իրավաքաղաքական, արդարացի լուծման փորձերից, այն ամբողջովին ներծծված է իրենց ադրբեջանի «ժողովրդական ճակատ» հռչակած մոլլաների ու թուրք-մուսավաթական դրոշով զինված ադրբեջանական լիդերների կողմից կառավարվող մոլեռանդ ամբոխի ծրագրային դրույթներով: Դա ըստ էության խոշոր նահանջ է նույնիսկ Միության վերադաս մարմինների կողմից ղարաբաղյան հարցի կարգավորման առնչությամբ վերջին մեկուկես տարվա ընդունած կիսատ-պռատ որոշումներից և տանում է դեպի պրոբլեմի քաղաքական լուծման կրկնապատիկ փակուղի:

Որոշումն ընդունելու աղաղակող պրոցեդուրային խախտումներ, այդ թվում Գերագույն խորհրդի հերթական նիստում պետական իշխանության բարձրագույն մարմնի ղեկավարի բացակայությունը, ղարաբաղյան հարցի ուսումնասիրման համար ժողովրդական դեպուտատների համագումարի ստեղծած հանձնաժողովի եզրակացության չհրապարակումը, ընդունվելիք որոշման նախագծից պառլամենտի անդամների բացարձակ անտեղյակությունը, այդ նախագծի կազմումը միայն ադրբեջանական կողմի մասնակցությամբ, ինչպես նաև հարցի քննարկման հապճեպությունն ու գաղտնիությունը, ինքնին վկայում են ընդունված որոշման հակաօրինական ձևածքը և դրա անընդունելիությունը:

Որոշումը սնանկ է նաև իր ամբողջ բովանդակությամբ: Դա ոչ միայն արհամարհում ու ոտնահարում է ինքնորոշման ձգտող ժողովրդի միջազգային օրենքներով հաստատված տարրական իրավունքները, այլև կարծես թե կենտրոնական իշխանությունների յուրովի անձնատուրությունն է ադրբեջանական խաժամուժին, իհարկե ոչ առանց հեռուն տանող նպատակների:

Խոսենք փաստերով. ադրբեջանական իշխանությունների և «ժողովրդական ճակատի» կողմից Արցախի երկարատև ու չդադարող պաշարումը, Խորհրդային Հայաստանի վերսկսված շրջափակումը դատապարտելու, մեղավորների նկատմամբ համապատասխան սանկցիաներ կիրառելու, պառլամենտի անունից բլոկադան վերացնելու երաշխիքներ տալու փոխարեն, որոշման առաջին կետում ի գիտություն է ընդունվել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի չարլան հայտարարությունն այն մասին, որ «հանրապետության իշխանության ու կառավարման մարմինները վճռական և անհետաձգելի միջոցներ կձեռնարկեն Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում երկաթուղիների ու ավտոմոբիլային ճանապարհների շրջափակումը վերացնելու նպատակով, և կապահովվեն բեռների անխափան փոխադրումները»:

Գուցե պառլամենտը անհրաժեշտ կհամարեր լսել նաև այդ ճանապարհներով հայազգի մարդկանց անվտանգ տեղաշարժն ապահովելու մասին ադրբեջանական նախագահի սուտ հավաստումնե՞րը: Թեև դրանից ոչինչ չէր փոխվի: Ո՞ւմ են պետք այդպիսի դեկլարատիվ հայտարարությունները, եթե դրանք ամրապնդված չեն համապատասխան իրավական երաշխիքներով: Մոռացության է տրվում, որ արցախցու աչքերին այլևս թոզ փչելն անհնարին է:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշ հարգարժան ղեկավարներ, օգտվելով լճացման տարիների «հարուստ» փորձից և նախագծեր կազմելու ընձեռված հնարավորությունից, չեն մոռացել որոշման 2-րդ կետով համենայնդեպս իրենց ապահովագրել:

Այդ առումով նրանք որոշման 2-րդ կետում պառլամենտի անունից հավանության են արժանացրել իրենց իսկ հետևությունները ու առաջարկությունները, որով փաստորեն հարցի նման անարդարացի լուծման պատասխանատվությունը իրենցից հեռացրել են: Բացի դա, հայտնի է, որ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարը հանձնաժողով էր առանձնացրել ղարաբաղյան պրոբլեմի ուսումնասիրման և եզրակացություններ ու առաջարկություններ ներկայացնելու համար: Օրինականն այն է, որ Գերագույն խորհուրդը լսեր ու քննարկեր այդ հանձնաժողովի հետևությունները ու առաջարկությունները և ոչ թե այդպիսիք փոխակերպվեին Գերագույն խորհրդի նախագահության անունից ներկայացվող դատողություններով: Մի կողմ դնել հանձնաժողովի 6-ամսյա աշխատանքի արդյունքները և մեխանիկորեն վավերացնել կաբինետներում ծնված հետևությունները ու առաջարկությունները, առնվազն անիրավական է, հակադեմոկրատական, անբարոյական:

Ոչ մի քննադատության չի դիմանում նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման 3-րդ կետը, ըստ որի հանձնարարվել է ստեղծել ադրբեջանական հանրապետական կազմկոմիտե ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների 20-րդ գումարման խորհրդի ու նրա գործադիր կոմիտեի գործունեությունը վերականգնելու համար:

Հայտնի է, որ ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի գործունեությունը կասեցվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 12-ի հակասահմանադրական որոշմամբ, հետևաբար այդ մարմնի կամ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ էլ պետք վերացվեր, որով և ինքնին կվերսկսվեր նշված մարմինների գործունեությունը: Մինչդեռ որոշումը շատ խորամանկորեն և թուրքական դիվանագիտությամբ ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների 20-րդ գումարման խորհրդի և նրա գործադիր կոմիտեի գործունեության վերականգնելու մեխանիզմն ու հետագա բախտը թողել է ադրբեջանական կողմի կամքին՝ դրանից բխող իր բոլոր նեգատիվ հետևանքներով արցախյան ինքնավար ժողովրդի համար:

Իրավական ու բարոյական բոլոր նորմերին խիստ հակասող են Գերագույն խորհրդի որոշման 4-րդ կետի հանձնարարականները: Տեսեք հե՛. «Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին հանձնարարական տալ կարճ ժամկետում ընդունել այնպիսի օրենսդրական միջոցառումներ, որոնք ապահովեն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրական ինքնավարության կարգավիճակի բարձրացում, մարզի հայ բնակչության իսկական երաշխիքներ, օրինականության պահպանում, քաղաքացիների կյանքի ու անվտանգության պաշտպանություն, բոլոր ծագող պրոբլեմների սահմանադրական լուծում...» և այլն, և այլն:

Ոչ Սումգայիթ, ոչ Խոջալու, ոչ Կիրովաբադ..., ոչինչ չի եղել: Կարծես չկա նաև խորհրդային ֆեդերատիվ պետություն: Անգամ մոռացության է տրվել, որ ճորտատիրությունը Ռուսաստանում վերացել է դեռևս 1861 թվականին:

Գերագույն խորհրդի որոշումը, դադարեցնելով ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի հետագա գործունեությունը, որը քիչ թե շատ նպաստում էր ռեգիոնի վիճակը հարաբերականորեն կայուն պահելուն, ստեղծել է միութենական դիտորդ վերահսկիչ հանձնաժողով, այն ենթարկելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդին:

Մինչև այժմ կարծես ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը դիտորդի դերում չէր ադրբեջանական կողմի ապօրինությունների ու բռնությունների:

Որոշումից երևում է, որ այդ հանձնաժողովի իսկական նպատակն է վերահսկել, որպեսզի Ադրբեջանի կազմում Արցախը պահելուն ուղղված միջոցառումները լիովին իրականացվեն, չլինի թե դրանք հանդիպեն հայ բնակչության դիմադրությանը: Այդ դիմադրությունը կոտրելու համար էլ որոշվել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում թողնվելիք ներքին գործերի մինիստրության ներքին զորքերի համապատասխան զորաբաժինը ենթարկել դիտորդ վերահսկիչ հանձնաժողովին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը ավարտվում է մեզ հայտնի ստերեոտիպ կոչերով, որ Հայկական և Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների գերագույն խորհուրդները պետք է բոլոր միջոցները ձեռնարկեն երկու ժողովուրդների հարաբերությունները նորմալացնելու, վստահության և համագործակցության իրադրությունը վերականգնելու, տնտեսական ու մշակութային նորմալ կապեր հաստատելու համար:

Շնորհակալություն սերտված լոզունգների հիշեցման համար:

Տ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀԽՍՀ գերագույն դատարանի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու